ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Ներքին ինժեներական հաղորդակցուղիների համակարգեր» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/13 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի մարտի 11-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/13 գնման պայմանագրում 2026 թվականի ապրիլի 8-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Տեխնիկական վրիպակ
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի նախաբանում, Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Գործընկեր-1-ի վավերապայմաններում «ՓԲԸ» տառերը փոխարինվել են «ՍՊԸ» տառերով:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

11.03.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/13 գնման պայմանագրի

08.04. 2026թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՍՊԸ-ն (Գործընկեր-1), ի դեմս տնօրեն Ա. Բաբայանի և «Հիդրոէկ» ՍՊԸ-ն (Գործընկեր-2), ի դեմս տնօրեն Հ. Թոքմաջյանի (այսուհետ երկուսը միասին՝ Կատարող), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 07.02.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով **«Ներքին ինժեներական հաղորդակցուղիների համակարգեր» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքների կատարման** համար Կողմերի միջև 11.03.2025թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-25/13 գնման պայամանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի նախաբանում, Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում Գործընկեր-1-ի վավերապայմաններում «ՓԲԸ» տառերը փոխարինել «ՍՊԸ» տառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀ 900011019099
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

Վ. Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

Գործընկեր-1

«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան
ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի
ինստիտուտ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 125
«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀ 15100050055540100
ՀՎՀՀ 01516577

Տնօրեն՝

Ա. Բաբայան

(ստորագրություն)

Կ.Տ.

Գործընկեր-2

«Հիդրոէկ» ՍՊԸ
ք. Երևան, Արմենակյան 125/3
«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՎՀ 15100430386403 00
ՀՎՀՀ 00528216

Տնօրեն՝

Հ. Թոքմաջյան

(ստորագրություն)

Կ.Տ